23/10/2014

Դեպի Հյուսի՞ս թե՞ Արևմուտք

Հայաստանի ինտեգրացիոն հեռանկարները մշտապես գտնվում են հանրային ուշադրության կենտրոնում և դրան բազմիցս անրադարձել են և՛ ԶԼՄ-ները, և՛ քաղաքական ուժերը, և՛ պետական մարմինները, և՛ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Եղել են տարբեր գրառումներ, տարբեր կարծիքներ, սակայն ի՞նչ կարծիքի է հասարակությունն ընդհանուր առմամբ (Հայաստանի ամբողջ բնակչությունը): Այդ հարցի պատասխանը «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR Group) հասարակական կազմակերպությունը փորձեց պարզել հասարակական կարծիքի ուսումնասիրության միջոցով, որի ընթացքում հարցվեցին Հայաստանի 1300 բնակիչներ (Երևանում և մարզերում, 2014 թ. օգոստոս ամսվա ընթացքում):

Եվ այսպես այն հարցին, թե՝ «Ի՞նչ եք կարծում, Հայաստանը պե՞տք է անդամակցի», հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ՝ 38.4% Մաքսային միությանը[1], 24.8%՝ Եվրամիությանը, 11.8%՝ երկուսին էլ, 10.1%՝ ոչ մեկին, ոչ էլ մյուսին, իսկ 15% դժվարացել են պատասխանել (Գծապատկեր 1): Հարցվողներին նաև տրվել է հետևյալ հարցը՝ «Ըստ Ձեզ, Մաքսային միությանը միանալու հարցը պետք է որոշվեր նախագահի, կառավարության, Ազգային Ժողովի կողմից, թե՞ հանրաքվեի միջոցով»: Այս հարցի պատասխանները հետևյալն էին՝ 54.9%՝ «Հանրաքվեի միջոցով», 18.9%՝ «Նախագահը», 11.5%՝ «Ազգային Ժողովը», 8.5%՝ «Կառավորությունը», իսկ 5.9% դժավարացել են պատասխանել (Գծապատկեր 2):

Նշված հարցի պատասխանի տրամաբանությունն են արտացոլում հետևյալ հարցի պատասխանները. «Դուք կցանկանայի՞ք, որպեսզի ազգի համար բախտորոշ հարցերը (օրինակ՝ Մաքսային միությանը կամ Եվրամիությանը Հայաստանի Հանրապետության միանալը) որոշվեին հանրաքվեի միջոցով, երկրի նախագահի կողմից, Խորհրդարանի կողմից, Կառավարության կողմից…»: Հարցվողների 56.2% պատասխանել են «Հանրաքվեի միջոցով», 21.2%՝ «Երկրի նախագահի կողմից», 9.1%՝ «Խորհրդարանի կողմից», 7.5%՝ «Կառավարության կողմից», 3.4%՝ դժվարացել են պատասխանել (Գծապատկեր 3):

[1] Հարցման անցկացման ընթացքում ակտուալ էր Մաքսային միությանն անդամակցությունը, սակայն արդյունքները լիովին հնարավոր է պրոյեկտել նաև Եվրասիական տնտեսական միությանն ՀՀ անդամակցության վրա:

Իրականացված ուսումնասիրությունը հնարավորություն է տվել հասկանալ այս կամ այն կառույցներին անդամակցելու կողմնակիցների «կերպարը»: Մաքսային միությանը անդամակցելու նախապատվություն տվողները հիմնականում գյուղական համայնքների բնակիչներն են (Գծապատկեր 4): Սեռային կտրվածքով ՄՄ-ին նախապատվությունը հիմնականում տալիս են արական սեռի ներկայացուցիչները (Գծապատկեր 5): ՄՄ-ին՝ որպես ցանկալի միջազգային կառույց՝ անդամակցությանը կողմնակից անձանց մեծամասնության կրթությունը տարրական է (Գծապատկեր 6): Հետաքրքրական է նաև դիտարկել, թե ովքեր են Եվրամիությանն անդամակցությանը նախապատվություն տվողները. հիմնականում Երևանի բնակչությունը, նրանց մեծամասնությունն ունեն բարձրագույն կրթություն (ներառյալ մագիստրոսի կոչում) կամ հետբուհական կրթություն: Ըստ սեռա-տարիքային բաշխման՝ մեծամասամբ 18-25 տարեկան, գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները:

Ըստ բնակչության շրջանում իրականացված հարցումների՝ ՄՄ-ին, թե ԵՄ-ին անդամակցության հարցը պետք է/էր որոշվի/եր հանրաքվեի միջոցով: Հավելենք նաև հետևյալը, որ միջազգային կառույցին անդամակցության հարցում այլ երկրների կողմից ճնշում գործադրելու հավանականությունը նվազեցվում է այն դեպքում, երբ որոշում կայացնողը հանդիսանում է ոչ թե մեկ անհատ (օրինակ՝ երկրի նախագահը), այլ հանրությունը, որն իր ձայն արտահայտել է հանրաքվեի միջոցով:


Գծ. 1. Հայաստանի ցանկալի անդամակցությունը միջազգային կառույցներին ըստ հարցվողների
24.8%
38.4%
11.8%
10.1%
15.0%
Եվրամիությանը
Մաքսային միությանը
Երկուսին էլ
Ոչ մեկին, ոչ էլ մյուսին
Դժվ եմ պատ


Գծ. 2. ՄՄ միանալու համար ցանկալի որոշում ընդունող օղակն ըստ հարցվողների
Հանրաքվեի միջոցով
54.9%
Նախագահը
18.9%
Ազգային Ժողովը
11.5%
Կառավարությունը
8.5%
Դժվարանում եմ պատասխանել
5.9%


Գծ. 3. Երկրի համար վճռորոշ խնդիրների լուծման ցանկալի պատասխանատուներն ըստ հարցվողների
21.2%
7.5%
9.1%
56.2%
2.5%
3.4%
Երկրի նախագահի կողմից
Կառավարության կողմից
Խորհրդարանի կողմից
Հանրաքվեի միջոցով
Այլ
Դժվ եմ պատ


Գծ. 4 «Ի՞նչ եք կարծում, Հայաստանը պե՞տք է անդամակցի» հարցի պատասխանները ըս
30.1%
23.9%
20.2%
29.9%
40.0%
45.5%
12.2%
10.3%
12.7%
15.2%
7.2%
7.7%
Երևան
Այլ քաղա
Գյուղեր


Գծ. 5 «Ի՞նչ եք կարծում, Հայաստանը պե՞տք է անդամակցի» հարցի պատասխան
18.7%
27.0%
47.0%
35.3%
12.7%
11.4%
11.5%
9.5%
Արակ
Իգակ

Գծ. 6 «Ի՞նչ եք կարծում, Հայաստանը պե՞տք է անդամակցի» հարցի պատասխանները ըստ կրթության



APR Group